

ԱՅԱ ՊԱՊՈՅՑԱՆ  
ԵՐԻԱԾԻ պետական համալսարան

**ՍԱՐԴԸ ԵՎ ԺԱՍՏԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀԸ ՀԵՆՐԻ  
ՄԻԼԼԵՐԻ  
«ԽԵՑԳԵՏՏԻ ԱՐԵՎԱԴԱՐՁԵ» ՎԵՊՈՒՄ**

Ամերիկացի ժամանակակից վիպասան Հենրի Սիլերը (1891-1980) գրական աշխարհին ծանոթ է առաջին հերթին իր աղմկահարույց վեպերով, որոնք, ըստ շատ քննադատների, խախտում են քրիստոնեական բարոյականության նորմերը և սահմանները: Ժամանակից քաղաքակրության նորմերի դեմ ընդվզման ամենավառ օրինակներից է նրա «Խեցգետնի արևադարձը» վեպը (1934), որը ցնցեց և՛ ընթերցողներին, և՛ գրաքննադատներին: Հեղինակն այս վեպով փորձում է ցույց տալ մարդու՝ սեփական փորձը ազատ արտահայտելու իրավունքը՝ անկախ տվյալ հասարակության մեջ ընդունված բարոյական և սոցիալական նորմերից:

«Խեցգետնի արևադարձը» վեպի համար բնարան են ծառայել ամերիկացի պոետ և փիլիսոփա Ու. Ու. Էմերսոնի բառերը. «Այս վեպերը աստիճանաբար տեղ կզիշեն օրագրերին և ինքնակենսագրություններին. սրանք կարող են դառնալ շատ գրավիչ գրքեր, միայն եթե մարդն իմանա՞ ինչպես տարանջատի իր փորձը այն ամենից, ինչը նա անվանում է սեփական փորձ և ինչպես ճշմարտացիորեն հավերժացնի իր սեփական կյանքի ճշմարտությունը» (1:20): Այս բառերը կարծես ստեղծում են գրականության «ազատման» հեռանկար և փշրում են գեղարվեստական ձևի կարծը սահմանները: Սրանով Սիլերը ակնարկում է ընթերցողին, որ իր վեպը հենց այդպիսի գրականության օրինակ է: Նա կատարում է այն երկու նախապայմանները, որոնք Էմերսոնը առաջ էր քաշում նման գրականության համար. նախ՝ մարդու կողմից իր իրական «եսի» ձևավորում, որը դառնում է սեփական անհատականության հիմք, երկրորդ՝ այդ «եսի» անունից անկեղծ գրելու և խստելու ունակություն: Սիլերը հանգեցնում է մեզ այն մտքին, որ փորձը, որը մենք հաճախ համարում ենք մեր սեփականը, բնավ այդպիսին չէ: Մեր զգացմունքները և մտքերը, պարտադրվում են մեզ ի վերուստ՝ ինչ-որ տրանսցենդենտ ուժի կողմից: Ուստի մարդուն անհրաժեշտ է պարզել՝ ինչը

իր գիտակցության մեջ ի սկզբանե չի պատկանում սեփական «Եսին»: Եվ միայն զատելով սեփական «Եսի» փորձը՝ անհատը ձեռք կրերի իր ինքնությունը:

Սիլերին՝ որպես «Խեցգետնի արևադարձ» վեպի հեղինակի, շատ մոտ է Օսվալդ Շայենգերի պարուր: Ինչպես և գերմանացի փիլիսոփան, նա նույնպես անխուսափելի է համարում Եվրոպայի մայրամուտը, որն առաջնային է դարձնում քաղաքի «մեխանիզացված» կյանքը և այն օտարում քանականություն-քաղաքակրթությունից: Ժամանակակից քաղաքակրթությունը այն հիվանդ գիտակցության արդյունքն է, որ քաժանում է մարմինը և հոգին: Մարդուն պաշտպանելով՝ տարրերքներից և նրա համար հարմարավետություններ ստեղծելով՝ քաղաքակրթությունը միևնույն ժամանակ թուլացնում է նրա ողին ու մարմինը, պատսպարում բուն կյանքից: Դա է պատճառը, որ Սիլերը այլարանորեն համեմատում է քաղաքակրթությունը անբուժելի հիվանդության հետ. «Աշխարհը,- գրում է Սիլերը,- ինքն իրեն խժողով խեցգետին է (քաղցկեղ-հեղ.)» (1:22): Մարդու համար «հարմարավետություններ» ստեղծելով՝ քաղաքակրթությունը կործանում է բնությունը՝ քազմապատկելով «աշխարհի մարմնի» վրա քաղցկեղային քիչները:

Իր լավագույն վեպերում՝ «Խեցգետնի արևադարձ» և «Այծեղ-ջյուրի արևադարձ», քաղաքակրթության մասին այդ գաղափարը Հենրի Սիլերը արտահայտում է քաղաքի կերպարով: Սոազին դեպքում Փարիզն է, երկրորդ դեպքում՝ Նյու Յորքը: Հետաքրիդը է, որ Սիլերը, բնավ չլինելով դեկադենտ գրող, այնուամենայնիվ քաղաքի պատկերման մեջ բացահայտորեն հենվում է դեկադենտական ավանդույթի վրա: Զաղաքը հիշեցնում է Բողերի և Ունբոյի Փարիզը: Այն կարծես մի ամփոփ խորհրդանշան է և ներկայանում է մեզ որպես ժամանակից ու տարածությունից դրւս մի քաղաք և կերպավորում է իր մեջ բոլոր քաղաքները, որոնք երբեք գոյություն են ունեցել մարդկության պատմության մեջ: Սիլերը հեգնանքով գրում է. «Փարիզ՝ հավերժ քաղաք: Ավելի հավերժ, քան Հռոմը, ավելի հրաշալի, քան Նինևիան: Երկրագնդի կենտրոն, որի ուղղությամբ՝ թուլամիտ ապուշ, սողում ես միշտ կույրի պես» (1:220): Զբոսնելով ժամանակակից Փարիզի փոքր փողոցներով՝ վեպի հերոսը (և ինքը՝ շարադրողը) զգում է, որ այդ քաղաքի ներկայի մեջ անտեսանելիորեն արթնանում է Սիցիանդարը: Հեղինակը գտնում է, որ այդ ժամանակ-

ներից ի վեր քաղաքը չի փոխվել. փոխվել է միայն ձևը, որով ինքը մեզ ներկայանում է. «Թթվահոտ է զախս պատերից, բորբոսնած ներքնակի հոտ: Եվլուսա՝ միջնադարյան, այլանդակ տարրալուծված; սի-մինորային սիմֆոնիա» (1:65):

Այդուհանդերձ, Փարիզը մեր առջև ներկայանում է որպես կենդանի էակ: Այստեղ արդեն Սիլերը ավելի մոտ է Բողերին: Նա նկարագրում է քաղաքը՝ գործածելով «մարմնային» փոխարերություններ: Փարիզը տեքստում դառնում է մարմին, իսկ Սենա գետը, որը հոսում է նրա միջով, այդ մարմնի «հսկայական արյունատար անոր» (1:371): Սիլերյան քաղաքը խենքություններ է անում մարդու նման, հիվանդանում է մարդու պես: Հեղինակի պատկերացումներում, քաղաքը որոշ չափով պահպանում է իր մեջ կյանքի շունչը՝ ի տարրերություն Ամերիկայի խոշոր արդյունաբերական քաղաքների: Վերջիններս Սիլերի կողմից ներկայացվում են որպես արիեստական կառուցվածքներ, որտեղից կյանքը ամբողջովին դուրս է մղված: Փարիզը օրգանիզմ է, որ ծնվել է բնուրյան և քաղաքակրթության համագործակցությունից: Իսկ ամերիկյան քաղաքները ի սկզբանե մեռած են եղել, քանի որ նույն Եվրոպական գիտակցության մարմնավորումն են՝ անջատված սեփական մարմնից:

Միևնույն ժամանակ, Սիլերի Փարիզը, ինչպես և Բողերի Փարիզը, քազմաթիվ ախտեր ունեցող օրգանիզմ է: Այն աշխարհի մարմինն է՝ խոցված քաղաքակրթության հիվանդագին ոգով: Ինչպես և Բողերը, Սիլերը պահպանում է եվրոպական մշակութի մեջ ընդունված ավանդույթը՝ քաղաքը համեմատելով կնոջ հետ: Փարիզը նրա պատկերացումներում փողոցի մարմնավաճառութու (Ժերմեն): Քաղաքը, ինչպես և կինը, վեպում օժտված է կենսական էներգիայով. այդ պատճառով էլ հերոսին ներկայանում է որպես փոփոխական, անորոշ, քառտիկ: Հենց այդ հատկանիշներն են դարձնում քաղաքը դեկադենտորեն գրավիչ և դիվային, «քունավոր բուրմունք» արձակող (1:66):

Փարիզի երկակիությունը՝ հիվանդու և, միևնույն ժամանակ, կենսական էներգիայով լի, արդյունքն է այն ծանր պայքարի, որը տեղի է ունենում նրա մեջ՝ քաղաքակրթության օտարված գիտակցության պայքար բնուրյան ոգու հետ: Զաղաքում բնակվողները տառապում են այն նույն ախտերով, ինչով տառապում է նաև նրանց շրջապատող իրականությունը: Աշխարհ գալով մարդը հենց առաջին

բոպեից իր վրա զգում է քաղաքակրության իշխանությունը. նա ստիպված է «դասավորվել» այլոց կողմից արդեն ստեղծված հասարակական համակարգի մեջ: Մարդն անընդունակ է խօել կապերն այն համակարգի հետ, որի մեջ նրան ներգրավում են: «Խեցգետնի արևադարձը» վեպում Սիլերը, բացահայտելով ժամանակակից մարդու հոգեբանության կառուցվածքը, հենվում է անվանի հոգեբան Օստոն Ռանկի այսպես կոչված «ծննդյան վճասվածքների» հայեցակարգի վրա, որի մասին հաճախ է հիշատակում իր բազմարիվ տեքստերում: Ռանկը համարում էր, որ «մարդն իր աշխարհ գալու պահին ստացած ընկճախտից ձեռք է բերում վախ անկախության, անջատման հանդեպ: Նա նաև ազդում է նրա անհատականության վրա, եթե հետազայում նա կանգնած է լինում որևէ որոշում ընդունելու անհրաժեշտության առջև» (2:83-85): Այս գաղափարը շատ պատկերավոր կերպով ներկայացված է նաև վեպում: Սիլերը մեզ պատմում է Ֆիլմորի և նրա ընկերություն՝ Ժինետի փոխհարաբերությունների պատմությունը: Ֆիլմորը ցանկանում է խօել իր կապերը Ժինետի հետ, բայց ի վիճակի չէ դա անելու: Նա չի կարող ապրել այդ կոտոր հետ, բայց միևնույն ժամանակ չի կարող նրան բողնել, քանի որ իրեն տանջում է մեղքի զգացումը: Այն շատ ավելի ուժեղ է, քան անբարեհաճությունն իր ատելի ու վտանգավոր դարձած սիրություն հանդեպ: Ֆիլմորը վախենում է որոշակի վճիռ կայացնելուց, և այդ վախի հիմքում, ոչ միայն սեփական մեղքի զգացումն է, այլև անվատահությունը սեփական «եսի» հանդեպ: Այդ անլուծելի և փակուղային իրավիճակը բերում է նրան, որ Ֆիլմորի մոտ ի հայտ են գալիս հոգեկան խանգարման որոշ նշաններ: Բայց հեղինակը ցույց է տալիս, որ այդ հիվանդության ակունքները կարող են վերացնել ոչ թե բժիշկները, այլ միայն ինքը՝ Ֆիլմորը:

Սիլերը՝ իբրև վեպի շարադրող և հերոս, հենց սկզբից հանդես է գալիս որպես ազատություն ձեռք բերած անհատականություն, ով ունակ է հաստատել իր անհատական «եսի» սահմանները, զատել սեփական եսը՝ «կոլեկտիվ բանականությունից»: Աշխարհը նրա պատկերացմամբ դատարկ է և անիմաստ, անհատը, որն իրեն համարում է ազատ, ստիպված է ընդունել աշխարհի այդ հատկանիշները որպես անխուսափելի մի բան: Անհատին բաժին է ընկած հաշտվել մենության զգացման հետ և ինքնուրույնաբար հարթել սեփական ուղին: Որոշումներ ընդունելու ժամանակ նա չպետք է դիմի

ուրիշի տրանսգենդենտ իմաստությանը: Անհրաժեշտ է հաղթահարել սեփական «Եսի» ձեռքբերման և քաղաքակրթությունից անջատվելու հանդեպ վախր: Հերոսը ասում է. «Զգիտես ինչու այն միտքը, որ այս աշխարհում ոչ մի բանի վրա չի կարելի հույս դնել, ինձ վրա բար-մացնող ազդեցություն գործեց: Եվ այժմ, անսպասելի կերպով ոգե-շնչված, ես թերևացում գօացի այն մտքից, որ մարդկային գոյր ան-հուսալի է. մի մեծ քեռ ասես ընկավ իմ վրայից» (1:127):

Վախր կյանքի և սեփական եսի հանդեպ, ինչպես նաև շրջա-պատող դատարկության անտանելի տեսարանը ստիպում են մար-դուն, ըստ հեղինակի, հորինել մի տրանսգենդենտ իդեալ, որը իմաստ կիաղորդեր աշխարհին, բովանդակությամբ կլցներ դատարկությու-նը: Այդ իդեալը կապված է այլոց օգնության հույսի հետ: Դա միխ-թարանք է թույլ մարդկանց համար, ովքեր ի վիճակի չեն գործել ինք-նուրույնաբար, և ովքեր հենարանի կարիք ունեն: Սակայն Միլերը գտնում է, որ այդ իդեալը կեղծ է, և այն անսպայմանորեն կրերի մարդ-կությանը հիասքափության: Իսկական ծշմարտությունը, ինչպես և խսկական իդեալը, Միլերի պատկերացմամբ, ոչ թե փոխառվում, այլ նվաճվում է անհատական զանքերի ճանապարհով: Բայց երբ այդ նույն ծշմարտությունը դառնում է համընդհանուր, այն օգտագործ-վում է իշխանության կողմից որպես մարդու վրա ազդելու հնարավոր լծակ և ճնշամիջոց: «Խեցգետնի արևադարձը» վեպում Միլերը պատկերում է հավերժ արժեքները պահպանողների կերպարներ: Նրանք ծագումով Հնդկաստանի են, և դա պատահական չէ: Եվրո-պական մտավորականի ընկալումներում Հնդկաստանը իին իմաս-տության կիզակենտրոնն է, իսկ հնդիկները՝ բացարձակ գիտելիք-ների կենդանի կրողներ: Վեպում պատկերված հնդիկներից մեկի անունը Նանանտատի է: Միլերը դիտավորյալ աղավաղում է այդ անունը և յուրովի արտասանում այն (Nonentity)՝ ակնարկելով և ընդ-գծելով այդ անձի աննշանությունն ու ներքին էության բացակայու-թյունը: Միլերը նրա ծիսական աղոքները, կրքերը և գործողու-թյունները դիտարկում է դիտարկում է որպես արտաքին ձևական մի շղարշ: Նա գրում է. «Ըստ հնդիկի խոսքերի, եթե ամեն օր այդպես աղոքեք, ձեզ հետ ոչ մի վատ բան չի պատահի: Իր աստվածը երքեք չի մոռանում յուր հավատարիմ ծառաներին» (1:110):

Միլերի վեպում կանանց կերպարները առանձնակի տեղ են գրադարանում: Կնոջ ներաշխարհը շատ է նման հենց բուն կյանքին.

այն միշտ փոփոխական վիճակում է: Այստեղ բանականությունն ու դատողությունը երկրորդ պլան են մղվում՝ տեղը գիշելով անգիտակցականին: Այս առումով Միլերը շատ մոտ է սյուլոռեալիստական ավանդույթին: Կինը առաջին հերթին մարմնական սկիզբ է, քանի որ անմիջականորեն կապված է աշխարհի մատերիալայի հետ: Կինը վախ է առաջացնում տղամարդու մեջ, ինչպես անսահման դատարկությունն ու անորոշությունը, և միևնույն ժամանակ, ձգում է դեպի իրեն:

Ի հակադրություն դրան՝ տղամարդկային սկիզբը ստատիկ է և կանխատեսելի: Իսկ կնոջ դիմամիկ լինելը անհնարին է դարձնում նրա միանշանակ ընկալումը: Դա է պատճառը, որ Միլերի վեպում կանաց կերպարները այդպես ել մնում են մինչև վերջ ընկալված և անորոշ: Անհավաստի է առաջին հերթին հենց այն, ինչ իրենք պատմում են իրենց մասին: Իլոնան «անուղղելի ստախոս է, և նրա կոկորդը լի է կեղծիքով ու սին խոստումներով» (1:28): Անորոշությունը և երկակիությունը բնորոշ է նաև Ժինետի կերպարին: Նա կարող է լինել անկեղծ կին, ով սիրում է Ֆիլմորին, բայց և խորանանկ ու շահախնդիր, երբ փորձում է գայթակղելով իր ծուղակի մեջ գցել հարուստ ամերիկացուն:

Կանացի սկիզբը Միլերի համար ոչ միայն անսահմանի և բացարձակի կիզակետն է, այլև այն կենտրոնը, որտեղ միանում են աշխարհի բոլոր բնեոները և մարդկության ողջ պատմությունը: Խօգելով իր կապը կնոջ հետ՝ հերոսը իրեն զգում է «մարդկությունից դուրս»: Նա ասում է. «Այսօր ես հպարտանում եմ նրանվ, որ կապված չեմ մարդկանց և կառավարության հետ, որ ես ոչ մի ընդիմանուր բան չունեմ նրանց հավատամբների և սկզբունքների հետ» (1:299): Միլերի համար կնոցից կապերը խօգելը հավասարագոր է աշխարհի հետ կապերը խօգելուն: Նա կարծում է՝ «մարդը պետք է կարողանա «հաղթահարել մարդկայինը, ծեռք բերել ազատություն և երևակայություն և, վերջապես, դառնալ իդեալական» (1:287): Միլերի համոզմամբ՝ մարդը մի շրջապառույտ է կատարում իր կյանքում, որը պայքար է հիշեցնում, և «այդ դաժան պայքարից հետո փորձում է ազատվել և դուրս գալ մյուս ափ՝ անցյալի բերից ամբողջովին մաքրված» (1:219): Միլերը կտրականապես մերժում է վերաբարձ դեպի անցյալի հուշերը: «Խեցգետնի արևադաճը» վեպում «արտաքին մարդը» միշտ հաղում է «ներքինին»: Եթե եվրոպական ավանդական վեպի

Այսուժետային հիմքում որպես կանոն ընկած է իրադարձությունների շղթա՝ կապված հերոսի կյանքի հետ, ապա Միլերի վեպում ինչպես հերոսը, այնպես էլ բոլոր կերպարները «անջատ են» որևէ կենսագրական համատեքստից: Եթե անգամ առկա է որևէ հիշատակում՝ կապված անցյալի հետ, ապա վեպում դրանք միայն առանձին «մեկուսի» դրվագներ են, որոնք հնարավոր չեն միասնական կերպով վերականգնել: Այս ամենը ամբողջապես համապատասխանում է ինչպես Միլերի գեղարվեստական հայեցակարգին, այնպես էլ նրա՝ որպես մարդու և մտածողի, աշխարհայացքային սկզբունքներին:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Миллер Г. Тропик рака. СПб: Азбука, 1992.
2. Ранк О. Травма рождения и ее значение для психоанализа. М.: Когито-Центр, 2009.

**А. ПАПОЯН – Человек и современный мир в романе Г.Миллера “Тропик Рака”.** – В настоящей статье рассматривается вопрос о взаимоотношении человека с современным миром в автобиографическом романе Г.Миллера “Тропик Рака”. Автор мастерски сочетает вымышленные и реальные эпизоды, которые часто переходят из настоящего в прошлое и обратно. Некоторые главы созданы как поток сознания, в которых автор представляет свое восприятие и понимание реальности.

**A. PAPOYAN – *The Man and Contemporary World in H. Miller’s Novel “Tropic of Cancer”*.** – The paper discusses the interrelation between the man and contemporary world in H. Miller’s novel “Tropic of Cancer”. The author combines imaginary and real episodes of his life. It is stream of consciousness writing and the author conveys his perceptions and thoughts of the reality.